

տակ, թէ ի՛նչ առումներով է գործածուած նա մեր ընդուր մէջ, թէ նրանից ի՛նչ ածանցական եւ բարդ ձեւեր կան կազմուած հայերէնում, եւ այլն:

Դրան հետեւում է բառի ստուգաբանական բացատրութիւնը, որ եւ պարզում է՝ դեռ գրաբարում շատ գործածական այդ բառը հայերէն չէ, այլ փոխառութիւն օտար լեզուից — պարսկերէնից: Ապա թէ՛ ազատ «իրանական բառը տարածուած է նաեւ բազմաթիւ ուրիշ լեզուներում» — քրդերէնում, վրացերէնում, կովկասեան լեզուներում, մինչեւ իսկ, թուրքերէնի միջոցով, բուլղարերէնում, սերբերէնում եւ նոր յունարէնում:

Այս բացատրութիւններին հետեւում է նաեւ, թէ առաջին անգամ ի՛նչ զիտնականներ են ստեղծ նոյն բառի ստուգաբանական բացատրութիւնը եւ հաստատել՝ նրա փոխառուել լինելը հայերէնում: Յետոյ առաջ են բերում մեր բարբառներում գործածական ձեւերը, ինչպէս նաեւ զիտնականների կարծիքներ, թէ այսինչ լեզուին ազատ բառի գործածութիւնը հայերէնի՛ միջոցով է փոխանցուել:

Ըստ Bugge-ի, օրինակ, գոթերէն համապատասխան բառը (azets) «գիւրաւ» փոխառուել է հայերէն «ազատ» ձեւից, քանի որ գերմանացեղ ուրիշ լեզուներում չկայ այն:

Վերջապէս, վերցնենք մի երրորդ բառ, որ դարձեալ փոխառութիւն է. նա եւս այսօր մեր տկանջին հայերէն է հնչում, ինչպէս ազատը: Այն է՝ Ասպնջական:

Այդ բառի կազմութիւնը, ածանցական եւ բարդ ձեւերը յիշելուց, ինչպէս նաեւ նրանց առումները մէջ բերելուց յետոյ՝ տրւում է նրա ստուգաբանական բացատրութիւնը, որից հետեւում է, որ նա վեւ պակասութիւնից է փոխանուած — aspanj ձեւից, որ նշանակում է՝ օրեւան, քնակարան: Պարսկերէնում դառել է sipanj «հիւր»: Ապա՝ իրանեան այդ բառը փոխ են առել ասորիները, հայերը, թուրքերը, ռուսները, բուլղարները, սերբերը: Այդ ամենին հետեւում են զիտնականների կարծիքներ նոյն բառի ստուգաբանութեան մասին:

\* \* \*

Մի երկու խօսք էլ Արմատական Բառարանի արտաքինի, նրա սպագրութեան մասին: Դժբախտաբար դա սովորական իմաստով

տպարանական գործ էլ չէ, այլ՝ այսպէս կոչուած սպագրութիւն, որ ոչնչով չէ տարբերում սովորական վիմագրութիւնից, եւ որը պարզ վերաբարտարումն է հեղինակի ձեռագիր աշխատանքի: Այսինքն՝ մեր առջեւ դրուած է արհեստագիտօրէն (տեքնիքայէս) մի բոլորովին յետամնաց գործ, որ տանամեակներ առաջ գործածական էր՝ դպրոցական որոշ ձեռնարկների համար, եւ որոնք հեղինակի կողմից բաւականաչափ մշակուած չէին անպւում՝ տպագրական ձեւով լոյս ընծայուելու եւ ընդհանրութեան սեփականութիւն դառնալու համար: Եւ կամ այդպէս էին վարում դպրոցական վարչութիւնները՝ նիւթական նկատառումներով: Նման ձեւով լոյս տեսած վիմագրութիւնները հրապարակում էին ձեռագրի իրաւունքով, սակ դպրոցական (եւ կամ ուրիշ՝ դարձեալ սահմանափակ) գործածութեան յատուել, որով եւ ննթակայ չէին հրապարակային քննադատութեան: Պարզ է, որ չուկայ էլ չէին հանուում, այլ աշակերտ-ուսանողների ձեռքն էին տրւում՝ որպէս ստիական ձեռնարկ:

Հայաստանի «պետական հրատարակչութեան» լոյս ընծայած մի շարք աշխատութիւններ եւս նոյն ձեւով են պատրաստուած:

Պարզ է, որ Հայաստանի Համալսարանի վարչութիւնը ներկայ դէպքում խնայողութիւնից դրդուած է այս նախնական ձեւով լոյս ընծայել Աճառեանի Արմատական Բառարանը, այլապէս սա վաճառքի չէր հանուել:

Սրտանց ցաւել կարելի է միայն, որ նման բախտի է «արժանացել» զիտնական հեղինակի բազմարդիւն աշխատանքը: Ցաւել պէտք է նաեւ, որ Հայաստանի Համալսարանի անունով՝ արհեստագիտօրէն վերին աստիճանի մի թերի հրատարակութիւն է մատուցուած զիտական աշխարհին: Անուես անելու չէ, որ նման աշխատութիւններ օրուայ եւ տարուայ կեանք չունին, այլ սահմանուած են տանամեակներով, մինչեւ իսկ հարիւրամեակներով ապրելու: Արդեօք «Հայկազեանի» եւ նման բառարանների հետքը մնացած կը լինէ՞ր այսօր, եթէ այսպիսի նախնական ձեւով «տպագրուած» լինէին: Ծա՛տ արտոս:

Եւ մտածե՛լ որ Հայաստանում նիւթական միջոցներ չեն պակսում — ամէնն էլ ժողովրդական աղբիւրներից գոյացած — զանազան-